## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովաշեն համայնք,
հեռ. (094)21-71-09, (091)21-71-05, էլ. փոստ zovashen.kotayq@mta.gov.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԱՊԵՏ ԳՈՒԼՈՅԱՆԻՆ

N 48
*17 հունիսի 2016թ.*

Հարգելի պարոն մարզպետ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջների կից ներկայացվում է համայնքի ավագանու 14.06.2016 թվականին կայացած հինգերորդ հերթական նիստի որոշումները:

Առդիր 18 թերթ:

**Համայնքի ղեկավար՝** **ՍԵԴՐԱԿ ՍԱՖԱՐՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Զովաշեն, հեռ. (094)21-71-08, (091)21-71-05, էլ. փոստ zovashen.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՀՈՒՆԻՍԻ 2016թվականի N 20

## ԶՈՎԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի ԹԻՎ 5 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել համայնքի ավագանու 2016 թվականի հունիսի 14-ի թիվ 5 հերթական նիստի օրակարգը հետևյալ հարցերով՝

1.Զովաշենի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

2.Համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 21-ի N 22-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԺՈՐԱ
2. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ
3. ՄԽԻԹԱՐՅԱՆ ԷՎԵԼԻՆԱ
4. ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ
5. ՍԱՖԱՐՅԱՆ ՍԱՀԱԿ

**Համայնքի ղեկավար՝ ՍԵԴՐԱԿ ՍԱՖԱՐՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Զովաշեն, հեռ. (094)21-71-08, (091)21-71-05, էլ. փոստ zovashen.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

14 ՀՈՒՆԻՍԻ 2016թվականի N 21-Ա

## ԶՈՎԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ մասի և 32-րդ հոդվածի 1-ին մասի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Զովաշենի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2.Զովաշեն համայնքի ղեկավարին՝ Զովաշենի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու առաջարկությամբ մեկ շաբաթյա ժամկետում սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին:
3.Ուժը կորցրած ճանաչել Զովաշեն համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 21-ի «Զովաշենի գյուղապետարանի աշխատակազմի՝ 2015 թվականի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին » N 21-Ա որոշումը:
4.Սույն որոշման 1-ին և 3-րդ կետերն ուժի մեջ են մտնում Զովաշենի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԺՈՐԱ
2. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ
3. ՄԽԻԹԱՐՅԱՆ ԷՎԵԼԻՆԱ
4. ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ
5. ՍԱՖԱՐՅԱՆ ՍԱՀԱԿ

Համայնքի ղեկավար՝ ՍԵԴՐԱԿ ՍԱՖԱՐՅԱՆ

Հավելված
Զովաշեն համայնքի ավագանու
2016թ. հունիսի 14-ի 21-Ա որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

Աշխատակիցների թվաքանակը՝ 5

| Հ/հ | Կազմակերպության անվանումը | Հաստիքի անվանումը | Հաստիքի տեսակը | Պաշտոնի ծածկագիրը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը | Հավելումը | Հավելավճարը | Աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | Համայնքապետարանի աշխատակազմ | Համայնքի ղեկավար | Քաղաքական | - | 1 | 112434 | - | - | 112434 |
| 2 | | Համայնքի ղեկավարի տեղակալ | Հայեցողական | - | 1 | 75397 | - | - | 75397 |
| 3 | | Աշխատակազմի քարտուղար | Համայնքային ծառայության | 1.2-1 | 1 | 83140 | - | - | 83140 |
| 4 | | I-ին կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3.2-1 | 1 | 77904 | - | - | 77904 |
| 5 | | Հավաքարար | Տեխնիկական սպասարկման | - | 1 | 72750 | - | - | 36375 |
| 6 | | Պահակ | Տեխնիկական սպասարկման | - | | 72750 | - | - | 36375 |
| | Ընդամենը | | | | 5 | 494375 | | | 421625 |

Համայնքի ղեկավար Ա.Սաֆարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱՇԵՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Զովաշեն, հեռ. (094)21-71-08, (091)21-71-05, էլ. փոստ zovashen.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՀՈՒՆԻՍԻ 2016թվականի N 22-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 22-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն « Իրավական ակտերի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 21-ի « Զովաշեն համայնքի 2016 թվականի տարեկան բյուջեի հաստատման մասին » N 22-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը :

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԺՈՐԱ
2. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ
3. ՄԽԻԹԱՐՅԱՆ ԷՎԵԼԻՆԱ
4. ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ
5. ՍԱՖԱՐՅԱՆ ՍԱՀԱԿ

Համայնքի ղեկավար՝ ՍԵԴՐԱԿ ՍԱՖԱՐՅԱՆ